ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

0010 ք. Երևան, Կառավարական տուն 1

№ 02/05.1/8415-2023

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ-ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ ԴԱՎԻԹ ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Առաքելյան,

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ և 77-րդ հոդվածների՝ Ձեզ ենք ներկայացնում՝

1) «Լիցենզավորման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Գործունեության իրականացման ծանուցման մասին» օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին», «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին», «Առևտրի և ծառայությունների մասին» օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին», «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին», «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» և «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթի (Պ-436-22.11.2022-ՏՀ-011/0) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունները,

2) Հայաստանի Հանրապետության վարչապետի 2023 թվականի մարտի 10-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող) նշանակելու մասին» N 256 - Ա որոշումը:

Հարգանքով՝

ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Կատարող՝ Պետրոս Քացախյան
Ազգային ժողովի հետ կապերի վարչության խորհրդական՝ կառուցվածքային ստորաբաժանումներում առանձին գործառույթներ համակարգող
Հեռ. 010515686
Էլ փոստ՝ petros.qatsakhyan@gov.am

«ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԾԱՆՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓԱԹԵԹԻ (Պ-436-22.11.2022-ՏՀ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

«Լիցենզավորման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Գործունեության իրականացման ծանուցման մասին» օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին», «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին», «Առևտրի և ծառայությունների մասին» օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին», «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին», «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» և «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ստորև ներկայացնում է իր դիտողություններն ու առաջարկությունները.

I. «Լիցենզավորման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ.

1. Նախագծի 1-ին հոդվածում առաջարկում ենք՝

1) «ՀՕ-193 օրենքի» բառերից հետո լրացնել «(այսուհետ՝ Օրենք)» բառերով.

2) «2-րդ մասի» բառերից հետո լրացնել «աղյուսակի» բառով.

3) հանել «կատարել» բառը.

4) «1-ին և 2-րդ կետերը շարադրել հետևյալ բովանդակությամբ.» բառերը փոխարինել «1) 1-ին և 2-րդ կետերը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.» բառերով.

5) աղյուսակի 2-րդ կետի գործունեության տեսակները շարադրել հետևյալ բովանդակությամբ՝ «Պայթուցիկ նյութերի, պայթեցման սարքավորումների առևտուր և պայթեցման աշխատանքների կատարում, պահեստավորում, տեղափոխում կամ կիրառում (շահագործում)».

6) «Լրացնել 2.1 և 2.2 կետերով.» բառերը փոխարինել «2) 2-րդ կետից հետո լրացնել նոր՝ 2.1-ին և 2.2-րդ կետերով հետևյալ բովանդակությամբ.» բառերով.

7) աղյուսակի 2.2-րդ կետի գործունեության տեսակները շարադրել հետևյալ բովանդակությամբ՝ «Հրագործական արտադրատեսակների ներմուծում, կիրառում (շահագործում), առևտուր (իրացում), պահեստավորում և տեղափոխում (բացառությամբ կենցաղային նշանակության հրագործական արտադրատեսակների, որոնց մասով լիցենզավորման պահանջը վերաբերում է միայն կենցաղային նշանակության 1-ին և 2-րդ դասերի արտադրատեսակների պահեստավորմանը և տեղափոխմանը)»:

Առաջարկում ենք աղյուսակի 2.2-րդ կետում ամրագրել կենցաղային նշանակության 1-ին և 2-րդ դասերի արտադրատեսակների պահեստավորման և տեղափոխման համար հստակ չափաքանակներ:

2. Նախագծի 2-րդ հոդվածի 2-րդ մասն առաջարկում ենք շարադրել հետևյալ բովանդակությամբ՝

«2. Սույն օրենքից բխող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերը կընդունվեն սույն օրենքի պաշտոնական հրապարակման պահից 6 ամսվա ընթացքում»:

II. «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի վերաբերյալ.

Առաջարկում ենք.

1. Նախագծի 1-ին հոդվածում «4-րդ հոդվածի 15-րդ կետը շարադրել հետևյալ բովանդակությամբ.» բառերը փոխարինել

«4-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի՝» բառերով:

2. Նախագծի 1-ին հոդվածում՝

1) «Հրագործական արտադրատեսակ՝» բառերից առաջ լրացնել «ա) 15-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.» բառերով.

2) «Հրագործական արտադրատեսակ» հասկացության սահմանման տեքստում «բաղադրության» բառը փոխարինել «բաղադրիչների» բառով:

3. Նախագծի 1-ին հոդվածը լրացնել նոր մասով՝ հետևյալ բովանդակությամբ՝

«բ) 17-րդ կետն ուժը կորցրած ճանաչել»:

4. Նախագծի 1-ին հոդվածում «Նույն հոդվածի 17-19 պարբերությունները խմբագրել հետևյալ բովանդակությամբ» բառերը փոխարինել «գ) 18-րդ և 19-րդ կետերը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.» բառերով:

5. «Կենցաղային նշանակության հրագործական արտադրատեսակ» և «տեխնիկա-

կան նշանակության հրագործական արտադրատեսակ» հասկացությունների սահմանումն անհրաժեշտ է համապատասխանեցնել «Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի օգոստոսի 16-ի N 770 որոշմամբ հաստատված «Հրատեխնիկական արտադրատեսակների անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 006/2011) Մաքսային միության տեխնիկական կանոնակարգին և առաջարկում ենք օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ և 19-րդ կետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«**կենցաղային նշանակության հրագործական արտադրատեսակ՝** («Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի օգոստոսի 16-ի N 770 որոշմամբ հաստատված «Հրատեխնիկական արտադրատեսակների անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 006/2011) Մաքսային միության տեխնիկական կանոնակարգին համապատասխան I, II և III դասեր)՝ արտադրատեսակ, որը նախատեսված է բնակչության կողմից կիրառման համար, և որի շահագործումը կիրառման հրահանգին համապատասխան ապահովում է մարդկանց, ունեցվածքի և շրջակա միջավայրի անվտանգությունը.

տեխնիկական նշանակության հրագործական արտադրատեսակ՝ («Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի օգոստոսի 16-ի N 770 որոշմամբ հաստատված «Հրատեխնիկական արտադրատեսակների անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 006/2011) Մաքսային միության տեխնիկական կանոնակարգին համապատասխան IV և V դասեր)՝ արտադրատեսակ, որի կիրառման համար պահանջվում են հատուկ գիտելիքներ և հարմարանքներ (սարքեր):

6. Նախագծի 1-ին հոդվածում «21-րդ կետը» բառերն առաջարկում ենք փոխարինել «2) 2-րդ մասը» բառերով՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ հիշյալ մասով, ըստ էության, սահմանվում է առանձին կարգավորում:

7. Նախագծի 1-ին հոդվածը լրացնել նոր 3-րդ մասով՝ հետևյալ բովանդակությամբ՝

«Կենցաղային նշանակության հրագործական III դասի և տեխնիկական նշանակության հրագործական արտադրատեսակների ներմուծմամբ զբաղվելու գործունեությունը և կիրառումը թույլատրվում է միայն լիազոր մարմնի թույլտվությամբ, բացառապես պետական և համայնքային նշանակության կամ պետական և համայնքային մասնակցությամբ միջոցառումների համար:»:

Առաջարկում ենք կենցաղային նշանակության հրագործական III դասի և տեխնիկական նշանակության հրագործական արտադրատեսակների ներմուծմամբ զբաղվելու գործունեության և կիրառման համար ամրագրել հստակ չափաքանակներ:

8. Նախագծի 2-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանվում է անցումային դրույթ, որի համաձայն՝ սույն օրենքից բխող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերը կընդունվեն սույն օրենքն ուժի մեջ մտնելու օրվանից 6-ամսյա ժամկետում: Մինչդեռ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 3-րդ հոդվածով սահմանվում է կենցաղային նշանակության հրագործական արտադրատեսակի կիրառման համար օրենսդրությամբ սահմանված պայմանները կամ պահանջները խախտելու համար վարչական պատասխանատվություն: Նույն նախագծի 6-րդ հոդվածի համաձայն՝ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանից 6 ամիս հետո: Այսինքն՝

կենցաղային նշանակության հրագործական արտադրատեսակի կիրառման համար օրենսդրությամբ սահմանված պայմանների կամ պահանջների խախտումն առաջացնելու է վարչական պատասխանատվություն, իսկ նշված պայմանները կամ պահանջները սահմանվելու են համապատասխան ենթաօրենսդրական ակտով:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ եթե օրենսդրական ակտով (բացառությամբ Սահմանադրության) սահմանված նորմը կարող է կատարվել միայն այդ ակտով նախատեսված ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտի ընդունմամբ, կամ դրա կատարումն ուղղակիորեն պայմանավորված է ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտի ընդունմամբ, ապա օրենսդրական ակտի անցումային դրույթներով սահմանվում է նաև ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտի ընդունման նախատեսվող ժամկետը:

Վերոգրյալը հաշվի առնելով՝ առաջարկում ենք նախագծի 2-րդ հոդվածի 2-րդ մասում «կընդունվեն սույն օրենքն ուժի մեջ մտնելու օրվանից 6 ամսյա ժամկետում» բառերը փոխարինել «կընդունվեն սույն օրենքի պաշտոնական հրապարակման պահից 6 ամսվա ընթացքում» բառերով:

III. «Գործունեության իրականացման ծանուցման մասին» օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ.

Առաջարկում ենք նախագծի 1-ին հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«Հոդված 1. «Գործունեության իրականացման ծանուցման մասին» 2015 թվականի նոյեմբերի 13-ի ՀՕ-120-Ն օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ մասի աղյուսակի «1. ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ» բաժինն ուժը կորցրած ճանաչել:»:

Նախագծում անհրաժեշտ է նախատեսել անցումային դրույթ այն դեպքերի համար, երբ մինչև նախագիծն ուժի մեջ մտնելը ներկայացվել է ծանուցում հրագործական ապրանքների արտադրություն, ներմուծում կամ առևտուր իրականացնելու համար:

Ըստ այդմ հարկ կլինի վերանայել նախագծի վերնագիրը:

IV. «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ.

1. Նախագծի 1-ին հոդվածը շարադրել հետևյալ բովանդակությամբ՝

«**Հոդված 1.** «Պետական տուրքի մասին» 1997 թվականի դեկտեմբերի 27-ի ՀՕ-186 օրենքի «(այսուհետ՝ Օրենք)» 19-րդ հոդվածի 1-ին մասի «18. ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՅԼ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐ» բաժինը լրացնել 18.18-րդ կետով հետևյալ բովանդակությամբ.

«18.18.	Տեխնիկական նշանակության հրագործական արտադրատեսակների, կենցաղային նշանակության հրագործական արտադրատեսակների 3-րդ դասի արտադրության, ներմուծման, կիրառման (շահագործման), առևտրի (իրացման), պահեստավորման և տեղափոխման համար կենցաղային նշանակության 1-ին և 2-րդ դասերի արտադրատեսակների պահեստավորման և տեղափոխման համար	բազային տուրքի 500-ապատիկի չափով»:

2. Նախագծի 2-րդ հոդվածը շարադրել հետևյալ բովանդակությամբ՝

«**Հոդված 2.** Օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետը շարադրել հետևյալ բովանդակությամբ.

«26.	իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերի կողմից պայթուցիկ նյութերի, պայթեցման սարքավորումների արտադրության, ներմուծման, առևտրի և պայթեցման աշխատանքների կատարման, պահեստավորման, տեղափոխման կամ կիրառման (շահագործման) թույլտվություն տալու համար	բազային տուրքի 500-ապատիկի չափով»:

3. Նախագծի 3-րդ հոդվածը շարադրել հետևյալ բովանդակությամբ՝

«**Հոդված 3.** Օրենքի 20.1-ին հոդվածի 1-ին մասի աղյուսակի 1-ին կետն ուժը կորցրած ճանաչել:»:

4. Նախագծի 4-րդ՝ ուժի մեջ մտնելու հոդվածում անհրաժեշտ է նախատեսել անցումային դրույթ այն դեպքերի համար, երբ պետական տուրքի վճարումը կատարվել է մինչև նախագծի ուժի մեջ մտնելը:

Ընդ որում, առավել նպատակահարմար ենք համարում խնդրո առարկա լիցենզավորման ենթակա գործունեության տեսակները տարանջատվեն և արտադրության ու ներմուծման մասով սահմանվեն էականորեն բարձր պետական տուրքեր:

Բացի այդ, առաջարկում ենք քննարկել խնդրո առարկա գործունեության տեսակների մասով պետական տուրքերը տարեկան սահմանելու նպատակահարմարության հարցը:

V. «Առևտրի և ծառայությունների մասին» օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ.

1. Նախագծի 1-ին հոդվածում «հոդվածի 12.1 կետը խմբագրել հետևյալ բովանդակությամբ» բառերն անհրաժեշտ է փոխարինել. «հոդվածում՝

1) 12.1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.» բառերով և նոր խմբագրությամբ առաջարկվող մասը վերցնել չակերտների մեջ:

Նախագծի 1-ին հոդվածով օրենքի 9-րդ հոդվածի նոր խմբագրությամբ շարադրվող 12.1-ին մասում ամրագրված կարգավորումից պարզ է դառնում, որ տեխնիկական

նշանակության հրագործական արտադրատեսակի, հրագործական բաղադրիչների և այլ պայթուցիկ սարքերի (նյութերի) վաճառքը թույլատրվելու է բացառապես համապատասխան լիցենզիա ունեցող իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերի, մինչդեռ նախագծերի փաթեթով հրագործական բաղադրիչների վաճառքը չի դիտարկվում որպես լիցենզավորման ենթակա գործունեության տեսակ, ուստի անհրաժեշտ է վերանայել նշված հանգամանքը և վաճառքի թույլտվությունը համադրել «Լիցենզավորման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածով նախատեսված լիցենզավորման ենթակա գործունեության տեսակների հետ:

Միևնույն ժամանակ, նկատի ունենալով այն հանգամանքը, որ «Առևտրի և ծառայությունների մասին» օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ առևտրի և ծառայությունների ոլորտում նույն օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողությունը, բացառությամբ 3.1-ին հոդվածի, 4-րդ հոդվածի 1-ին և 6-րդ մասերի, 5-րդ հոդվածի 1-ին մասի, 4-րդ մասի «դ» կետի և 5-րդ մասի, 6-րդ հոդվածի 1-ին մասի «բ» և «գ» կետերի, 2-րդ մասի, 7-րդ հոդվածի 1-ին մասի «գ», «դ», «ե», «զ» և «է» կետերի, 3-րդ մասի, 9-րդ հոդվածի 3-րդ մասի և 15-րդ մասի «գ» կետի, 11-րդ հոդվածի 2-րդ և 8-րդ մասերի, 12-րդ հոդվածի 4-րդ մասի, 14-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերի, 15-րդ հոդվածի 4-րդ մասի, 4.3-րդ գլխի, իրականացնում են տեղական ինքնակառավարման մարմինները, սակայն նախագծի 1-ին հոդվածով «Առևտրի և ծառայությունների մասին» օրենքի 9-րդ հոդվածի նոր խմբագրությամբ շարադրվող 12.1-ին մասում նախատեսվում է համապատասխան լիցենզիայի առկայության դեպքում վաճառքի իրականացման պահանջ, իսկ լիցենզավորման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Լիցենզավորման մասին» օրենքով, որի կիրառության իմաստով տեղական ինքնակառավարման մարմինները լիցենզավորող մարմին չեն համարվում, ուստի «Առևտրի և ծառայությունների մասին» օրենքի 9-րդ հոդվածի նոր խմբագրությամբ շարադրվող 12.1-ին մասում նախատեսված կարգավորման պահպանման նկատմամբ հսկողությունը տեղական ինքնակառավարման մարմնին վերապահելը խնդրահարույց է և չի բխում տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների շրջանակներից:

Նույն դիտարկումը վերաբերելի է նաև նախագծի 2-րդ հոդվածով օրենքի 9-րդ հոդվածում լրացվող 12.2-րդ մասով առաջարկվող կարգավորմանը:

Նախագծի 2-րդ հոդվածում «Հոդված 2. Առևտրի և ծառայությունների մասին» 2004 թվականի նոյեմբերի 24-ի ՀՕ-134-Ն օրենքի 9-րդ հոդվածը լրացնել 12.2 մասով հետևյալ բովանդակությամբ» բառերն անհրաժեշտ է փոխարինել «2) լրացնել նոր 12.2-րդ մաս՝ հետևյալ բովանդակությամբ.» բառերով և առաջարկվող նոր մասում «արտադրատեսակների» բառը փոխարինել «արտադրատեսակի» բառով:

VI. «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ հայտնում ենք հետևյալը.

1. Նախագծի 1-ին հոդվածում «խմբագրել» բառերն առաջարկում ենք փոխարինել «շարադրել» բառերով և, հաշվի առնելով այն հանգամանքը, որ համապատասխան փոփոխությունները և լրացումները կատարվում են Վարչական իրավախախտումների

վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 169.16-րդ հոդվածում՝ առաջարկում ենք նախագծի 1-ից 5-րդ հոդվածները միավորել և նախատեսել մեկ հոդվածով: Բացի դրանից, հարկ է նկատի ունենալ նաև, որ նախագծում կիրառվող «վաճառել» եզրույթներն անհրաժեշտ է վերանայել, դրանք համապատասխանեցնելով «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծում կիրառվող եզրույթներին, մասնավորապես՝ հիշյալ նախագծում կիրառվում է «առևտուր» եզրույթը:

Ներկայացված առաջարկությունների ընդունման դեպքում նախագծի 1-ից 5-րդ հոդվածների միավորման արդյունքում նախագծի 1-ին հոդվածն առաջարկում ենք շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«**Հոդված 1.** 1985 թվականի դեկտեմբերի 6-ի Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 169.16-րդ հոդվածում՝

1) 9-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«9. Առանց թույլտվության կամ թույլտվությամբ սահմանված պահանջների կամ պայմանների խախտմամբ տեխնիկական նշանակության հրագործական արտադրատեսակ, պայթուցիկ նյութեր, պայթեցման սարքավորումներ կիրառելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկից մինչև երկուհազարապատիկի չափով:

Սույն մասով նախատեսված արարքը վարչական տույժի նշանակման օրվանից հետո՝ մեկ տարվա ընթացքում, կրկին կատարելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկից մինչև երեքհազարապատիկի չափով:».

2) 10-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«10. Առևտրի և ծառայությունների բնագավառում գործունեություն իրականացնող անձանց կողմից հրագործական արտադրատեսակի, պայթուցիկ նյութերի, պայթեցման սարքավորումների համապատասխան լիցենզիայի պայմանները կամ պահանջները չապահովելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկից մինչև երկուհազարապատիկի չափով:

Սույն մասով նախատեսված արարքը վարչական տույժի նշանակման օրվանից հետո՝ մեկ տարվա ընթացքում, կրկին կատարելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկից մինչև երեքհազարապատիկի չափով:».

3) 11-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«11. Կենցաղային նշանակության հրագործական արտադրատեսակի կիրառման համար օրենսդրությամբ սահմանված պայմանները կամ պահանջները խախտելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկից մինչև հազարապատիկի չափով:

Սույն մասով նախատեսված արարքը վարչական տույժի նշանակման օրվանից հետո՝ մեկ տարվա ընթացքում, կրկին կատարելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի

հազարհինգհարյուրապատիկից մինչև երկուհազարհինգհարյուրապատիկի չափով:».

4) լրացնել նոր՝ 11.1-ին և 11.2-րդ մասերով հետևյալ բովանդակությամբ.

«11.1. Առանց թույլտվության կամ թույլտվությամբ սահմանված պահանջների կամ պայմանների խախտմամբ հրագործական արտադրատեսակի, պայթուցիկ նյութերի, պայթեցման սարքավորումների առևտուրը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատա-վարձի հազարհինգհարյուրապատիկից մինչև երկուհազարհինգհարյուրապատիկի չափով:

Սույն մասով նախատեսված արարքը վարչական տույժի նշանակման օրվանից հետո՝ մեկ տարվա ընթացքում, կրկին կատարելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատա-վարձի երկուհազարհինգհարյուրապատիկից մինչև երեքհազարհինգհարյուրապա-տիկի չափով.

11.2. 16 տարին չլրացած անձանց կենցաղային նշանակության հրագոր-ծական արտադրատեսակներ վաճառելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատա-վարձի երկուհարյուրհինսնապատիկի չափով:

Սույն մասով նախատեսված արարքը վարչական տույժի նշանակման օրվանից հետո՝ մեկ տարվա ընթացքում, կրկին կատարելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատա-վարձի հինգհարյուրապատիկի չափով»:

2. Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապե-տության օրենսգրքի 169.16-րդ հոդվածում նախատեսված են այն վարչական իրավախախտումները, որոնք օրենքով տեղական ինքնակառավարման մարմիններին վերապահված իրավասու-թյուններին համապատասխան ենթակա են քննման տեղական ինքնակառավարման մարմինների կողմից, մինչդեռ այս առումով հարկ է նկատել, որ լիցենզավորման հետ կապված հարաբերությունները կարգավորված են «Լիցենզավորման մասին» օրենքով, որի կիրառության իմաստով տեղական ինքնակառավարման մարմինները լիցենզավորող մարմին չեն համարվում՝ ուստի, նախագծով 169.16-րդ հոդվածում փոփոխվող և լրացվող վարչական իրավախախտումները հայտնաբերելու և քննելու իրավասությունը տեղական ինքնակառավարման մարմնին վերապահելը խնդրահարույց է և չի բխում տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների շրջանակներից: Այդ առումով անհրաժեշտ է հստակեցնել տեղական ինքնակառավարման մարմիններին և լիցենզավորող մարմնին քննմանն ենթակա վարչական իրավախախտումների շրջանակը:

VII. «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքում փոփոխու-թյուններ կատարելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ հայտնում ենք հետևյալը.

Հաշվի առնելով «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ 7-րդ մասով ներկայացված առաջարկը, առաջարկում ենք «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագիծը հանել փաթեթից:

VIII. «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքում

փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ.

Հաշվի առնելով «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ 7-րդ մասով ներկայացված առաջարկը, առաջարկում ենք «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը հանել փաթեթից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 256 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ (ՀԱՐԱԿԻՑ ՋԵԿՈՒՑՈՂ) ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 66-րդ հոդվածի 2-րդ մասը՝

Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարի տեղակալ Դավիթ Համբարյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում «Լիցենզավորման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Գործունեության իրականացման ծանուցման մասին» օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին», «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին», «Առևտրի և ծառայությունների մասին» օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին», «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին», «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» և «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթը (Պ-436-22.11.2022-ՏՀ-011/0)

քննարկելիս կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն.ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

10.03.2023
ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ

ՆԱԽԱԳԻԾ

Պ-436-22.11.2022-ՏՀ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Լիցենզավորման մասին» 2001 թվականի մայիսի 30-ի ՀՕ-193 օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ մասի «1. ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ» բաժնում կատարել.

1-ին և 2-րդ կետերը շարադրել հետևյալ բովանդակությամբ.

«1.	Պայթուցիկ նյութերի և պայթեցման սարքավորումների արտադրություն, ներմուծմամբ զբաղվելու գործունեություն	ԿՄ	-	Փ	-	Ո	Հ	Վ
2.	Պայթուցիկ նյութերի, պայթեցման սարքավորումների առևտուր, պահեստավորում, կիրառում (շահագործում) և պայթեցման աշխատանքների կատարում	ԿՄ	-		-	Ո	Հ	Վ

Լրացնել 2.1 և 2.2 կետերով.

2.1.	Հրագործական արտադրատեսակների արտադրություն, ներմուծմամբ զբաղվելու գործունեություն	ԿՄ	-	Փ	-	Ո	Հ	Վ
2.2	Հրագործական արտադրատեսակների առևտուր (իրացում), կիրառում (շահագործում) (բացառությամբ կենցաղային նշանակության հրագործական արտադրատեսակների) և պահեստավորում:	ԿՄ	-		-	Ո	Հ	Վ»:

Հոդված 2. Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակումից վեց ամիս հետո:

2. Մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը «Գործունեության իրականացման ծանուցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված հրագործական ապրանքների արտադրության, ներմուծման կամ առևտրի իրականացման ծանուցում ներկայացրած անձը համարվում է սույն օրենքով սահմանված նույն տեսակի գործունեության իրականացման ծանուցում ներկայացրած անձ:

ՆԱԽԱԳԻԾ

Պ-436[1]-22.11.2022-ՏՀ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ»
ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» 2005 թվականի հոկտեմբերի 24-ի ՀՕ-204-Ն օրենքի 4-րդ հոդվածի 15-րդ կետը շարադրել հետևյալ բովանդակությամբ.

«Հրագործական արտադրատեսակ՝ հրագործական բաղադրության այրման (պայթյունի) օգնությամբ անհրաժեշտ արդյունքի ստացման համար նախատեսված արտադրատեսակ».

Նույն հոդվածի 17-19 պարբերությունները խմբագրել հետևյալ բովանդակությամբ.

«**կենցաղային նշանակության հրագործական արտադրատեսակ՝** ՀՀ կառավարության որոշմամբ սահմանված հրագործական արտադրատեսակ, որը նախատեսված է բնակչության կողմից կիրառման համար և որի շահագործումը կիրառման հրահանգին համապատասխան ապահովում է մարդկանց, ունեցվածքի և շրջակա միջավայրի անվտանգությունը.

տեխնիկական նշանակության հրագործական արտադրատեսակ՝ ՀՀ կառավարության որոշմամբ սահմանված հրագործական արտադրատեսակ, որի վաճառքը արգելված է ֆիզիկական անձանց և որը կարող է կիրառվել բացառապես համապատասխան լիցենզիա ունեցող իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերի կողմից՝ ՏԻՄ կամ ՀՀ կառավարության որոշումներով սահմանված կարգով:

21-րդ կետը շարադրել հետևյալ բովանդակությամբ.

կենցաղային և տեխնիկական նշանակության հրագործական արտադրատեսակների չափորոշիչները, դասակարգումները, ինչպես նաև տեխնիկական անվտանգության ոլորտում տեխնիկական անվտանգության նորմերը, կանոնները և հրահանգները սահմանվում են Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ:

Հոդված 2. Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանից 6 ամիս հետո:

2. Սույն օրենքից բխող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերը կընդունվեն սույն օրենքն ուժի մեջ մտնելու օրվանից 6 ամսյա ժամկետում:

ՆԱԽԱԳԻԾ

Պ-436[2]-22.11.2022-ՏՀ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԾԱՆՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Գործունեության իրականացման ծանուցման մասին» 2015 թվականի նոյեմբերի 13-ի ՀՕ-120-Ն օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ մասի աղյուսակի «1. ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ» բաժնի 1-ին կետը շարադրել հետևյալ բովանդակությամբ.

«1.	Կենցաղային նշանակության հրագործական արտադրատեսակների առևտուր (իրացում)	ԿՄ	-	-

Լրացնել 2-րդ կետով հետևյալ բովանդակությամբ

«2.	Տեխնիկական նշանակության հրագործական արտադրատեսակների առևտուր (իրացում) և կիրառում (շահագործում)	ԿՄ	-	-

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանից 6 ամիս հետո:

ՆԱԽԱԳԻԾ

Պ-436[3]-22.11.2022-ՏՀ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության 1997 թվականի դեկտեմբերի 27-ի ՀՕ-186 օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել 26.1 կետով հետևյալ խմբագրությամբ.

«26.1.	իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերի կողմից հրագործական արտադրատեսակների առևտրի (իրացման), կիրառման (շահագործման) (բացառությամբ կենցաղային նշանակության հրագործական	բազային տուրքի 50-

	արտադրատեսակների), արտադրության, ներմուծմամբ զբաղվելու գործունեության, պահեստավորման թույլտվություն տալու համար»:	պատիկի չափով

Հոդված 2. 20.1 հոդվածի 1-ին մասի աղյուսակի 1)-ին կետը շարադրել հետևյալ բովանդակությամբ.

1) «Կենցաղային նշանակության հրագործական արտադրատեսակների առևտրի (իրացման) իրավունք ձեռք բերելու համար՝»:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանից 6 ամիս հետո:

ՆԱԽԱԳԻԾ

Պ-436[4]-22.11.2022-ՏՀ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Առևտրի և ծառայությունների մասին» 2004 թվականի նոյեմբերի 24-ի ՀՕ-134-Ն օրենքի 9-րդ հոդվածի 12.1 կետը խմբագրել հետևյալ բովանդակությամբ.

12.1. Տեխնիկական նշանակության հրագործական արտադրատեսակի, հրագործական բաղադրիչների և այլ պայթուցիկ սարքերի (նյութերի) վաճառքը թույլատրվում է բացառապես համապատասխան լիցենզիա ունեցող իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերի:

Հոդված 2. «Առևտրի և ծառայությունների մասին» 2004 թվականի նոյեմբերի 24-ի ՀՕ-134-Ն օրենքի 9-րդ հոդվածը լրացնել 12.2 մասով հետևյալ բովանդակությամբ.

«12.2 «Կենցաղային նշանակության հրագործական արտադրատեսակների վաճառքը 16 տարին չլրացած անձանց արգելվում է»:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանից 6 ամիս հետո:

ՆԱԽԱԳԻԾ

Պ-436[5]-22.11.2022-ՏՀ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ» ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության 1985 թվականի դեկտեմբերի 6-ի օրենսգրքի 169.16-րդ հոդվածի 9-րդ մասը խմբագրել հետևյալ բովանդակությամբ.

«Առանց թույլտվության կամ թույլտվությամբ սահմանված պահանջների կամ պայմանների խախտմամբ տեխնիկական նշանակության հրագործական արտադրատեսակի կիրառելը՝»

Հոդված 2. Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության 1985 թվականի դեկտեմբերի 6-ի օրենսգրքի 169.16-րդ հոդվածի 10-րդ մասի 1-ին պարբերությունը խմբագրել հետևյալ բովանդակությամբ.

«Առևտրի և ծառայությունների բնագավառում գործունեություն իրականացնող անձանց կողմից Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված տեխնիկական նշանակության հրագործական արտադրատեսակի կիրառման պահանջները կամ պայմանները չապահովելը»

Հոդված 3. Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության 1985 թվականի դեկտեմբերի 6-ի օրենսգրքի 169.16-րդ հոդվածի 10-րդ մասի 4-րդ պարբերությունը խմբագրել հետևյալ բովանդակությամբ.

«առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հազարերեքհարյուրապատիկից մինչև երկուհազարապատիկի չափով և տեխնիկական նշանակության հրագործական արտադրատեսակի կիրառման թույտվությունից զրկում՝ մեկ տարի ժամկետով:»

Հոդված 4. Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության 1985 թվականի դեկտեմբերի 6-ի օրենսգրքի 169.16-րդ հոդվածի 11-րդ մասի 1-ին պարբերությունը խմբագրել հետևյալ բովանդակությամբ.

«Սահմանված կարգով տեխնիկական նշանակության հրագործական արտադրատեսակի կիրառման թույլտվություն չստացած իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերի տեխնիկական նշանակության հրագործական արտադրատեսակ, հրագործական բաղադրիչներ և այլ պայթուցիկ սարքեր (նյութեր) վաճառելը՝»

Հոդված 5. Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության 1985 թվականի դեկտեմբերի 6-ի օրենսգրքի 169.16-րդ հոդվածը լրացնել 11.1 մասով հետևյալ բովանդակությամբ.

«16 տարին չլրացած անձանց կենցաղային նշանակության հրագործական արտադրատեսակներ վաճառելը

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրհինսնապատիկի չափով:

Սույն մասով նախատեսված արարքը վարչական տույժի նշանակման օրվանից հետո՝ մեկ տարվա ընթացքում, կրկին կատարելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկի չափով»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանից 6 ամիս հետո:

ՆԱԽԱԳԻԾ

Պ-436[6]-22.11.2022-ՏՀ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի Հայաստանի Հանրապետոիթյան օրենքի 18-րդ հոդվածի 41.1 կետը խմբագրել հետևյալ բովանդակությամբ՝

41.1 «սահմանում է համայնքի տարածքում տեխնիկական նշանակության հրագործական արտադրատեսակի կիրառման թույլատրելի վայրերը, պահանջները և պայմանները»

Հոդված 2. «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1.10 կետը խմբագրել հետևյալ բովանդակությամբ՝

10) Հայաստանի Հանրապետության օրենքներին և այլ իրավական ակտերին համապատասխան՝ իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին տալիս է համայնքի տարածքում տեխնիկական նշանակության հրագործական արտադրատեսակի կիրառման թույլտվություն.

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման պահից 6 ամիս հետո:

ՆԱԽԱԳԻԾ

Պ-436[7]-22.11.2022-ՏՀ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 38-րդ կետը խմբագրել հետևյալ բովանդակությամբ՝

38. «սահմանում է Երևանում տեխնիկական նշանակության հրագործական արտադրատեսակի կիրառման թույլատրելի վայրերը, պահանջները և պայմանները»

Հոդված 2. Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքի 52-րդ հոդվածի 14.1 կետը խմբագրել հետևյալ բովանդակությամբ՝

14.1 «Հայաստանի Հանրապետության օրենքներին և այլ իրավական ակտերին համապատասխան՝ իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին տալիս է Երևանում տեխնիկական նշանակության հրագործական արտադրատեսակի կիրառման թույլտվություն»

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման պահից 6 ամիս հետո:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

««ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ, ««ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԾԱՆՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», ««ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», ««ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», ««ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ» ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ, «ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ, «ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

1. Ընթացիկ իրավիճակը եւ իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը.

Սույն թվականի օգոստոսի 14-ին Երեւան քաղաքի «Սուրմալու» առեւտրի կենտրոնում տեղի ունեցած խոշոր աղետով պայմանավորված, ինչպես նաեւ «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքով Արտակարգ իրավիճակների նախարարությանը վերապահված պայթուցիկ նյութերին վերաբերող լիցենզավորման ենթակա գործընթացներին զուգահեռ նաեւ դրանց ներկրումը, պահեստավորումը եւ կիրառումը (շահագործումը) լիցենզավորման կանոնակարգման դաշտ ներառելու նպատակահարմարության հարցը քննարկելու վերաբերյալ՝ առաջացել է սույն օրենքների փաթեթի ընդունման անհրաժեշտությունը:

Ներկայումս հրագործական նյութերի արտադրությունը, ներմուծումը եւ առեւտուրն իրականացվում են «Գործունեության իրականացման ծանուցման մասին» ՀՀ օրենքով սահմանված ծանուցման ենթակա գործունեության իրականացման պարզ ընթացակարգով, սակայն հաշվի առնելով, որ այդ գործառույթներն իրենց մեջ պարունակում են անվտանգության, առողջապահական եւ այլ բաղադրիչներ, ուստի անհրաժեշտություն է առաջացել գործընթացը բերել լիցենզավորման դաշտ, ինչը հնարավորություն կտա վերահսկողության ավելի գործուն միջոցներ ձեռնարկելու եւ լիցենզիաների տրամադրման ելակետային չափորոշիչներ եւ պարտադիր պահանջներ սահմանելու համար:

Հրագործական արտադրատեսակների արտադրությունը, վտանգավորության աստճանով պայմանավորված, առաջարկվում է նաեւ դարձնել որպես փորձաքննության ենթակա լիցենզավորման գործունեության տեսակ այն մոտեցմամբ, ինչը նախատեսված է պայթուցիկ նյութերի եւ պայթեցման սարքավորումների արտադրության պարագայում:

2. Առաջարկվող կարգավորման բնույթը.

Պայթուցիկ նյութերի, պայթեցման սարքավորումների ներկրումը, պահեստավորումը, կիրառումը (շահագործումը), ինչպես նաեւ հրագործական, արտադրատեսակների, ներմուծմամբ զբաղվելու գործունեությունը, արտադրությունը, պահեստավորումը, առեւտուրը եւ կիրառումը դարձնել լիցենզավորման ենթակա գործունեության տեսակ:

3. Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները, անձինք

Նախագիծը մշակվել է ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Սիսակ Գաբրիելյանի, Երեւանի քաղաքապետարանի եւ ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության մասնակցությամբ:

4. Ակնկալվող արդյունքը.

Նախագծի ընդունման արդյունքում պայթուցիկ նյութերի, պայթեցման սարքավորումների ներկրումը, պահեստավորումը, կիրառումը (շահագործումը), հրագործական նյութերի, արտադրանքերի ներմուծմամբ զբաղվելու գործունեությունը, արտադրությունը, պահեստավորումը, առեւտուրը եւ կիրառումը կբերվի լիցենզավորման դաշտ, ինչը հնարավորություն կտա վերահսկողության ավելի գործուն միջոցներ ձեռնարկելու եւ լիցենզիաների տրամադրման ելակետային չափորոշիչներ եւ պարտադիր պահանջներ սահմանելու համար:

5.Լրացուցիչ ֆինանսական միջոցների անհրաժեշտությունը եւ պետական բյուջեի եկամուտներում եւ ծախսերում սպասվելիք փոփոխությունները.

Նախագծի ընդունման կապակցությամբ լրացուցիչ ֆինանսական միջոցների անհրաժեշտությունը բացակայում է: ՀՀ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի բյուջեի ծախսերի եւ եկամուտների ավելացում կամ նվազեցում չի նախատեսվում:

6. «Կապը ռազմավարական փաստաթղթերի հետ. Հայաստանի վերափոխման ռազմավարություն 2050, Կառավարության 2021-2026թթ. ծրագիր, ոլորտային եւ/կամ այլ ռազմավարություններ».

Նախագիծը բխում է ՀՀ կառավարության 2021-2026թթ. գործունեության ծրագրից: Դրույթը ներառված է ծրագրի «1. Անվտանգություն եւ արտաքին քաղաքականություն» գլխի «Աղետներին դիմակայունության բարձրացումը» վերնագրում՝ «Անվտանգության ապահովման հիմնական գործոններից է լինելու աղետների ռիսկի կառավարման ճկուն ու գործուն համակարգը, որի ներդրման շնորհիվ կունենանք պաշտպանված բնակչություն, տնտեսություն, տարածքներ, ենթակառուցվածքներ, մշակութային ու բնապահպանական օբյեկտներ», ինչպես նաեւ «4. Մարդկային կապիտալի զարգացում» գլխի «4.10 Շրջակա միջավայրի պահպանություն» բաժնում. «- շրջակա միջավայրի պահպանության վերահսկողության եւ մշտադիտարկման միասնական համակարգի կատարելագործումը, թույլտվությունների, լիցենզիաների միասնական եւ ժամանակակից համակարգերի ներդրումը, առաջնային տեղեկատվության համակարգված կառավարումը, շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման եւ փորձաքննության համակարգի կատարելագործումը՝ հիմնված կանխարգելման սկզբունքի վրա, փորձաքննության որակի բարձրացմանն ուղղված գործուն մեխանիզմների ներդրմամբ»: